

Մեղմ 22ուկոս

Bookmark

Charles Aznavour

À VOIX BASSE

Bookmark

Շառլ Ազնավուր

Մեղմ շշուկով

Թարգմանությունը ֆրանսերենից՝
Սամվել Գասպարյանի



ԵՐԵՎԱՆ
2019

ՀՏԴ 78:82-94

ԳՄԴ 85.31

Ա. 250

Ազնավուր Շառլ

Ա. 250 Մեղմ շշուկով/ Շառլ Ազնավուր; Թարգմանությունը ֆրանսերենից՝ Սամվել Գասպարյանի.- Եր.: Newmag, 2019.- 208 էջ:

2009 թվականին Ֆրանսիայում հրատարակված այս գրքում Շառլ Ազնավուրն անկեղծորեն խոսում է իր ընտանիքի անցյալի ու իր կարիերայի մեկնարկի դժվարությունների մասին: Կարծես «կինոյի լեզվով» գրված այս գիրքն իսկապես վավերագրական վեպ է. ահա փոքրիկ Շառլը Լատինական թաղամասի իրենց նեղիկ բնակարանում ծնողների ու քրոջ՝ Աիդայի հետ, Կարդինալ Լեմոան փողոցի Թատերական դպրոցում առաջին դերը, թատերական հյուրախաղերը: Հետո՝ առաջին քայլերը շանտոնում, որը համարում էին «արվեստի երկրորդական տեսակ», և առաջին հոդվածներն «անդուր» արտաքին ու «զարհուրելի» ձայն ունեցող «ոչ ժողովրդական» երգերի «ձախողակ» կատարողի մասին, որը ելույթներ էր ունենում կաբարեներում և գիշերային ակումբներում: Հետո եկան հաջողությունը, փառքը, և իրար հաջորդեցին անհամար համերգները: Ամենասիրելին 1963 թվականին ԽՍՀՄ-ում տված առաջին համերգն էր: Ազնավուրը գրքում բացատրում է, թե ինչու: Նա պատմում է իր ստացած կյանքի դասերի և ճակատագրի հեգնանքի մասին, թե ինչպես է դպրոցական կրթությամբ ինքնուր մի քանի տասնամյակ անց դառնում երեք համալսարանի պատվավոր դոկտոր: Խորհում է Շառլ Կրոյի երաժշտական մրցանակի մասին 20 տարի երազելու և այդ մրցանակից հրաժարվելու մասին: Ազնավուրն անկեղծ զրոյց է բացում ժամանակակից բարբերի, նորելուկ աստղերի, ինքնագովազդի և, իհարկե, սիրո մասին:

ՀՏԴ 78:82-94

ԳՄԴ 85.31

ISBN 978-9939-9217-4-7

Շառլ Ազնավուր. «Մեղմ շշուկով» © newmag, 2019

Գիրքը թարգմանվել և հրատարակվել է ֆրանսիական Les Editions du Seuil հրատարակչական ընկերության թույլտվությամբ:

Charles Aznavour “À voix basse”

© Don Quichotte Editions, une marque des Editions du Seuil, 2009

Շապիկի լուսանկարը՝ © Claude Gassian

Հեղինակի լուսանկարը՝ Դավիթ Հակոբյանի

Գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել «ԱՄԻ» գրական գործակալության միջոցով:

ՆԱԽԱԳԾԻ
ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ

Amundi  **ACBA**

ASSET MANAGEMENT

Ձեր փորձառու գործընկերը

amundi-acba.am

Հովանավորի խոսք

«100 տոկոս ֆրանսիացի, 100 տոկոս հայ». այսպես էր իրեն բնութագրում Փարիզում ապրող հայ ներգաղթյալների որդին՝ Շառլը: Ֆրանսերենի հավերժական սիրահարն արժանի է հիշողություններով ու մտերմիկ պատմություններով այս գրքի հայերեն թարգմանությամբ վերախմաստավորվելուն: Ուստի Ամունդի-ԱԿԲԱ-ն մեծ ուրախությամբ աջակցեց այս հիանալի նախաձեռնությանը, որն առաջնորդում է նաև նրա որդին՝ Նիկոլան:

Շառլ Ազնավուրն իր երկու հայրենիքների՝ Ֆրանսիայի և Հայաստանի միջև յուրօրինակ կամուրջ էր: Այս իմաստով՝ Ամունդի-ԱԿԲԱ-ն, որպես ֆրանս-հայկական կազմակերպություն, չէր կարող իրեն չվերագտնել այս համատեքստում: Եվ փոքր-ինչ ավելի անկեղծանալու դեպքում, ինչպես ամեն ֆրանսահայ, ես նույնպես ինձ համեստորեն մոտ եմ զգում Շառլի պատմությանը՝ «100 տոկոս ֆրանսիացի, 100 տոկոս հայ»:

*Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ ՓԲԸ
գործադիր տնօրեն
Ժան Մազեցյան*

Բովանդակություն

Գլուխ I	Հպանցիկ հաջողություն	13
Գլուխ II	Մասնեջ եղեգնափող	121
Գլուխ III	Ձրի երգ	131
Գլուխ IV	Ըստանեկան սպիտակ էջեր	143
Գլուխ V	Ո՛չ պրոլետար, ո՛չ ինտելեկտուալ	175
Գլուխ VI	Իմ կյանքի աշունը	201
	Հետգրության փոխարեն	203

Իմ հանդիսատեսին
և
բոլոր նրանց, ովքեր այսօր զբաղվում են կամ
ցանկանում են զբաղվել իմ մասնագիտությամբ,
դերասաններին, երգիչներին,
երգերի տեքստերի հեղինակներին, երգահաններին
և
այսօրվա երիտասարդ սերնդին՝
մեր ապագային:

Մարդ կա՝ հիշողություն ունի, մարդ էլ կա՝ հուշերով է ապրում:
Այդ պատկերները կարծես սկիզբ են առնում հիշողության
անցքերից դուրս հորդացող մաքրամաքուր ակունքից, հասնում
են մինչև մեր ձեռքերը և փոխանցվելով մատներին դառնում են
թղթի ճերմակ թերթի վրա գրված խորհմաստ բառեր: Ցավոք,
այդ հուշերը չեն ներկայանում ժամանակագրական կարգով
և մեզ պաշարում են խառնիխուռն ձևով՝ ներկայից հասնելով
մինչև ծնունդ և ծննդյան պահից մեզ բերելով ներկա:
Աստված իմ, որքան սոռացված դեպքեր են կրկին հառնում մեր
մտքում այն բանից հետո, երբ սկսում ենք մտովի քայլել
«հիշում եմ»-ի բավիղներով...

Մեր մանկությունն ու ջահելությունը
Ավարտվում են, երբ լրանում է մեր քառասուն տարին,
Եվ երեխաներիս շնորհիվ էր, որ
Հասկացա դրանց
Թե՛ քաղցրությունը, թե՛ համուռուրը:

I

Հպանցիկ հաջողություն

Մեր տանը, սենյակի պատերին, երբևէ նկար չի եղել կախված: Անշուշտ, ո՛չ քիչ թե շատ հայտնի նկարչի թեկուզ աննշան մի գործ, ո՛չ էլ գոնե անձանոթ մեկի ինչ-որ խզբզոց: Ամենուրեք դառն անցյալի սևեռուն վկաներն էին՝ մեր գերդաստանի անդամների լուսանկարները, և միայն Աստծուն է հայտնի, թե նրանք որտեղ և ինչպես էին անհետացել: Մեր վտարանդի ընտանիքի կյանքն իսկական դժոխքի կվերածվեր, եթե մեր ծնողներն այն չլցնեին հումորով և լավատեսությամբ:

Այո, մեր տանը միշտ երգում-պարում էինք, որովհետև նվագարկիչ ունեինք և կարողանում էինք մոդայիկ երաժշտության վերջին ձայնապնակները ձարել: Հյուրասենյակում դաշնամուր ունեինք, դասական երաժշտության և համերգային երգերի նոթատետրեր, էլ չեմ խոսում ամենատարբեր երաժշտական գործիքների մասին: Հայրս թառ, քամանչա կամ դափ էր նվագում, իսկ քույրս՝ Աիդան, կամ մայրս դաշնամուրով նվագակցում էր նրան: Երաժշտությունն ու թատրոնն ինձ գերեցին շատ վաղ տարիքից, որովհետև ծնողներս, որոնք էությամբ արտիստ էին և արվեստի ջերմ սիրահար, երգել ու բեմի վրա խաղացել էին իրենց հյուրընկալ երկիր

ուտք դնելուց դեռ շատ առաջ: Այն էլ ասեմ, որ բեմն իր դռներն իմ առջև բացել է հենց թատրոնի միջոցով...

Հայրս փոքրիկ սրճարան ուներ ուղիղ Փարիզի կենտրոնում՝ Կարդինալ-Լեմուան փողոցի վրա: Երջանիկ պատահականությամբ սրճարանը գտնվում էր հենց այն հաստատություններից մեկի դիմաց, որն այն ժամանակ կոչվում էր Թատերական դպրոց¹: Դա երկսեռ դպրոց էր, և ծնողներս քրոջս՝ Աիդային ու ինձ ընդունել տվեցին այնտեղ: Դպրոց հասնելու համար պետք է ընդամենն անցնեինք փողոցի մյուս կողմը: Այդ դպրոցի առանձնահատկությունն այն էր, որ երեկոյան ներկայացումներում զբաղված երեխաների դասերը սկսվում էին կեսօրից հետո, իսկ նրանք, ովքեր ընտրել էին պարը կամ մեկ այլ մասնագիտություն և փորձեր ունեին օրվա երկրորդ կեսին, հաճախում էին առավոտյան ժամերին: Հիշում եմ, երբ որևէ բեմադրիչ կամ ֆիլմի տնօրեն երեխայի էր փնտրում ֆիլմում նկարահանվելու կամ թատերական ներկայացման մեջ խաղալու համար, դիմում էր մեր դասատուներին, և նրանք մեզ շարք էին կանգնեցնում դպրոցի բակում կամ սանդղամուտքի մոտ, որպեսզի մեզնից ընտրություն կատարեն: Ստացվեց այնպես, որ դպրոց հաճախելու հենց հաջորդ օրը մի բեմադրիչի ընտրությունը կանգ առավ ինձ վրա. ես պետք է հանդես գայի գերմանացի մի հեղինա-

¹ Թատերական դպրոց - այս դպրոցը, որի ղեկավարն էր «Կոմեդի ֆրանսեզ» թատրոնի դերասան-փայտեր Ռայմոն Ռոնյոնին, ավարտել են թատրոնի և կինոյի մի շարք նշանավոր աստղեր, այդ թվում՝ Լուիզա Կառլետտին՝ մի փայլուն կինոդերասանուհի, որին սիրահարվել էի 7 թե 8 տարեկանում: (Գրքում ծանոթագրություն կատարել են և՛ հեղինակը, և՛ թարգմանիչը: Հեղինակային ծանոթագրություններն առանձին հիշատակվում են: Մնացած բոլորը թարգմանչինն են):

կի «Էմիլը և խուզարկուները»¹ պիեսում, որը բեմադրվելու էր Շանգ Էլիզեի ստուդիայում: Խաղալու էի աֆրիկացի երեխայի դեր: Ահա այսպես անսպասելիորեն հայտնվեցի կախարդական հողմապտույտի գրկում, որն ինձ տարավ իր հետ: Ընդամենը մեկ ունկնդրում, և, հո՛ւպ, առաջին դերը թատերական պիեսում (հաջողությունն առաջին անգամ ժպտում է ինձ), հետո երկրորդը, երրորդը... Բեմելներն ու դերակատարուները հաջորդում են իրար՝ ինձ դարձնելով, այսպես ասած, դերասան, ճիշտ է, դեռ երեխա, բոլորովին երեխա, սակայն, միևնույն է, իսկական դերասան: Իհարկե, ոչ մեծ դերասան, բայց մի՞թե դա կարևոր էր, ես, ախր, դեռ առաջին քայլերն էի անում: Բայց, ուշադրություն, իմ առօրյա կյանքը ոչ մի բանով չէր տարբերվում իսկական դերասանի կյանքից: Ես արդեն Մարինյի, Մադլեն և Օդեոն թատրոնների հայտնի դերասանների դերընկերն էի, հյուրախաղերի էի մեկնում գավառական քաղաքներ՝ գրպանումս պայմանագրեր և երաշխավորված հոնորար: Իսկ դա նշանակում էր, որ կարող էի հպարտ լինել իմ վաստակած ռոճիկով ընտանիքիս օգնելու համար:

Աիդան և ես միշտ զրկված ենք եղել մանկություն ունենալու իրավունքից, և դա կարծես բավական չէր, հիմա էլ մեր կյանքը, որ արդեն քիչ թե շատ հունի մեջ էր ընկել մեր առօրյա գործերի ու հոգսերի շնորհիվ, կտրուկ փոխվեց և

¹ «Էմիլը և խուզարկուները» - սկզբնաղբյուրը գերմանացի գրող Էրիխ Կեստների վեպն է, որը պատմում է գավառացի մի երեխայի՝ Էմիլի արկածների մասին, երբ նա 1930 թ. առաջին անգամ որոշում է գնալ Բեռլին՝ տատիկին հյուր: Ճանապարհին նրա փողերը գողանում են: Ես խաղում էի աֆրիկացի երեխայի՝ Սիկիի դերը: Ինձ դիմա-հարդարել էին սևամորթի պես... Հիշում եմ՝ ամեն անգամ, փորձից հետո, մեզ ետ-ճաշիկ էին տալիս, հետը՝ իսկական շոկոլադ: Դժբախտաբար 30 ներկայացում ունեցանք: Իսկ մեկ անգամ ընդամենը մի հանդիսատես կար դահլիճում: Եվ քանի որ նա խուլ էր, ներկայացումը պարզապես չեղարկեցին: (Ծանոթագրությունը՝ Ազնավուրի):